ՍԵՌԱԿԱՆ ԽՆԴՐՈՎ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՇՐՋԱՆԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ժ. Բ. ԹՈՍՈՒՆՅԱՆ

V դարի առաջին կեսին, գրերի գյուտից հետո, սկզբնավորվում ու զարգանում է հայ մատենագրությունը։ Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի ու նրանց աշակերտների կողմից գրվում կամ թարգմանվում են բազմաթիվ գործեր։ Գրաբարի զարգացման այդ շրջանը, որը կոչվում է մեսրոպյան կամ դասական շրջան, տևում է ավելի քան կես դար (406—461 թթ.)։ Այդ շրջանից մեզ են հասել 41 անուն ինքնուրույն և թարգմանական գրքեր, որոնց լեզուն աչքի է ընկնում իր բարձր որակով։ Դասական շրջանի ինքնուրույն ստեղծագործություններն են Եղնիկ Կողբացու, Կորյունի, Ագաթանգեղոսի և Փավստոս Բուզանդի երկերը։ Հայ մեծանուն լեզվաբան Հ. Աճառյանը նշում է, որ մեսրոպյան շրջանի գրվածքները իրարից տարբերվում են միայն ոճով, բայց բառապաշարով և քերականությամբ իրար բոլորովին նման են[1]։

Դասական գրաբարն ունի վեց հոլով, որոնցով արտահայտվում են առարկայական զանազան հարաբերություններ։ Սակայն այդ հարաբերություններն այնքան շատ են, որ հոլովների միջոցով հնարավոր չէ արտահայտել բոլորը։ Չնայած մի հոլովը կիրառվում է բազմաթիվ գործառույթներով (ֆունկցիա), բայց նորից կարիք է զգացվում ինչ-որ բառերի ու միջոցների՝ այդ հարաբերությունները արտահայտելու համար։ Առարկաների միջև եղած մնացած հարաբերությունները արտահայտվում են այնպիսի բառերի միջոցով, որոնք սպասարկում են հոլովման համակարգին[2] և գրաբարի քերականության մեջ կոչվում են նախդիրներ ու նախադրություններ։ Նշենք, որ հայ քերականները հենց սկզբից, իհարկե տարբեր ըմբռնմամբ, իբրև առանձին խոսքի մաս ընդունել են նաև նախդիրներն ու նախադրությունները։ Եվ դա բնական է, որովհետև քննարկվող խոսքի մասը գրաբարում շատ լայն կիրառություն է ունեցել։

Ե՛վ նախդիրները, և՛ նախադրությունները հիմնականում արտահայտում են նման բերականական հարաբերություններ և այդ հատկանշի հիման վրա էլ միավորվում են մի խոսքի մասի մեջ։ Դրանք՝

1. ի տարբերություն նյութական իմաստ ունեցող խոսքի մասերի, արտահայտում են վերաբերական իմաստ։ Բայց զատվում են նաև վերաբերական իմաստ ունեցող մյուս խոսքի մասից՝ շաղկապից. առաջինները այդ հարաբերությունը դրսևորում են բառերի միջև, իսկ շաղկապները՝ նաև նախադասությունների։ Այնուհետև՝ եթե առաջինները ցույց են տալիս միայն

---

1 Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 83—84։

2 Ա. Ա. Արրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1952, էջ 239։

ստորադասական հարաբերություններ, ապա շաղկապները՝ նաև համադասական[3].

2. չթեքվող բառեր են.

3. հարաբերություններ չունեն, այլ ցույց են տալիս հոլովվող բառերի զանազան հարաբերությունները[4]. լրացնում են հոլովների թերին.

4. չեն կարող անկախաբար դառնալ նախադասության անդամ, այլ իրենց խնդրի հետ, որի վրա դրվում են, լինում են նախադասության մի անդամ։ Դրանով նրանք սահմանազատվում են նաև չթեքվող մյուս խոսքի մասերից՝ շաղկապներից, եղանակավորող բառերից և ձայնարկություններից, որովհետև վերջիններս ոչ մի կերպ չեն կարող դառնալ նախադասության անդամ։

5. Ինչպես նախդիրները, այնպես էլ նախադրությունները (սակավ բացառությամբ), իրենց խնդրից առաջ են դրվում, այսինքն՝ նախադաս են, որի հիման վրա էլ ստացել են իրենց անվանումը։

Սակայն նախդիրներն ու նախադրությունները նաև տարբերվում են իրարից. դրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատուկ գծերը։ Ի տարբերություն նախադրությունների[5], նախդիրները՝

ա) կորցրել են իրենց բառական իմաստը, պահպանել քերականական արժեքը, որն էլ, սակայն, դրսևորվում է բառակապակցությունների մեջ.

բ) կազմում են հոլով կամ հոլովվող բառին տալիս են հոլովական նշանակություն.

գ) ունեն նախադաս գործածություն.

դ) արտահայտում են խնդրային և պարագայական հարաբերություններ.

ե) դրվում են միայն թեք հոլովաձևերի վրա.

զ) կազմությամբ միավանկ արմատական ձևույթներ են, այսպես՝ ի (ը), զ, ց, առ, ընդ, ըստ.

է) շատ հին ժամանակներից հանդես են եկել ածանցական դերով, օրինակ՝ առաւել, ընդ(ը)կեր, զառամ, ընդունել, յառաջ, ցայգ և այլն։

ը) Մի նախդիր կարող է գործածվել մի քանի թեք հոլովների հետ, բացի ց-ից (սա գործածվում է միայն հայցականի հետ)։

Իսկ նախադրություններն էլ ունեն իրենց յուրահատկությունները։ Ի տարբերություն նախդիրների[6], դրանք՝

ա) հոլովական կապակցություններից դուրս էլ պահպանել են իրենց բառական անկախությունը, այսինքն՝ ունեն բառական արժեք[7].

բ) պահանջում են որևէ հոլովված բառ, որի վրա և դրվում են.

գ) հիմնականում գործածվում են նախադաս, բայց կան նաև այնպիսիները, որոնք դրվում են ետադաս (դրանք կոչվում են ետադրություններ).

դ) մեծ մասամբ արտահայտում են պարագայական հարաբերություններ.

ե) ընդհանրապես դրվում են թեք հոլովաձևերի վրա, բայց կան նաև մի

---

3 Տե՛ս Ս. Գ. Արրահամյան, Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը, Երևան, 1959, էջ 143։

4 Գ. Սնակ, Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, գիրք Ա, Երևան, 1939, էջ 134։

5 Տե՛ս Ա. Ա. Արրահամյան, Գրաբարի ձևաբանություն, էջ 260—261։

6 Նույն տեղում, էջ 298—299։

7 Տարբերությունները տրվում են ըստ նախդիրների առանձնահատկությունների հաջորդականության։

քանի նախադրություններ, ինչպես՝ իբրև, իբր, որպէս, որոնք կարող են գործածվել նաև ուղղական հոլովի հետ.

զ) հիմնականում ծագում են նյութական խոսքի մասերից՝ գոյականից, ածականից և մակբայից.

է) սովորաբար ածանցական կիրառություն չունեն.

ը) մի նախադրություն սովորաբար կարող է գործածվել մի որևէ հոլովի հետ։

Հայ քերականության պատմության մեջ նախադրություն խոսքի մասին տրվել են տարբեր սահմանումներ։ Դ. Թրակացու «Արվեստ քերականության» գրքի հայ թարգմանիչն ու մեկնիչները այն սահմանել են՝ ելնելով նրա շարադասությունից[8], իսկ հետագայում մեր քերականներն ու լեզվաբանները նախադրությունը բնորոշելիս՝ հաշվի են առել նրա շարահյուսական (մասամբ՝ նաև ձևաբանական) հատկանիշները[9]։

Ելնելով վերոհիշյալից, փորձենք սահմանել «նախդիր» և «նախադրություն» հասկացությունները։

Այն մասնիկները, որոնք անկախաբար չունեն բառական իմաստ, բայց դրվելով հոլովվող բառերի թեք հոլովաձևերի վրա, նրանց տալիս են հոլովի որոշակի նշանակություն, կոչվում են նախդիր։

Այն անփոփոխ բառերը, որոնք հոլովական կապակցություններից դուրս էլ պահպանում են իրենց բառական ընդհանուր իմաստը և, դրվելով թեք հոլովաձևերի վրա, ցույց են տալիս վերաբերական զանազան հարաբերություններ ու տվյալ բառը (նախադրության խնդիրը) կապում բային, կոչվում են նախադրություն։

Այս սահմանումները ցույց են տալիս, որ այդ սպասարկու բառերը կատարում են այնպիսի դեր, ինչպիսին հոլովները։ Բայց դրանք չեն նույնանում, որովհետև քննարկվող խոսքի մասը արտահայտում է ավելի որոշակի, կոնկրետ հարաբերություններ։ Բացի դրանից, կան այնպիսի հարաբերություններ (տարածական[10], ժամանակային, բաղդատական և այլն), ինչպես՝ «մեջ», «միջև», «վերև», «ներքև», «առաջ», «հետո», «պես», «նման» և այլն, որոնք կարող են արտահայտվել միայն նշյալ սպասարկու բառերի միջոցով։ Սակայն այդ հարաբերությունները նախդիրներն ու նախադրությունները ի վիճակի են արտահայտելու միմիայն հոլովների հետ, որովհետև նրանք, ինչպես արդեն այդ մասին խոսվել է, առանձին վերցրած նախադասության ան-

---

8 Ն. Ադոնց, Արուեստ Դիոնիսեայ քերականի և հայ մեկնութիւնք նորին, Պետրոգրադ, 1915, էջ 30։

9 Տե՛ս Մ. Սերաստացի, Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազան սեռի, Վենետիկ, 1730, էջ 175—176։ Պազտասար Դպիր, Պարզաբանութիւն քերականութեան կարճառօտ եւ դիւրիմաց, հատ. 1, Կ. Պոլիս, 1771, էջ 138։ Մ. Չամչեանց, Քերականութիւն հայկազեան լեզուի, Վենետիկ, 1779, էջ 1։ Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 95։ Ստ. Մալխասյանց, Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները, Թիֆլիս, 1891, էջ 47։ Նույնի՝ Գրաբարի համաձայնությունը, Թիֆլիս, 1892, էջ 69։ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 5, Երևան, 1965, էջ 60։

10 Տե՛ս Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, էջ 177։

դամ չեն դառնում, այլ տվյալ հոլովաձևի հետ (իրենց խնդրի) լինում են նախադասության մի անդամ։

Նախադրությունները, որոնք մեր քերականները անվանել են հոլովառու բառեր, խնդիր են առնում տարբեր թեք հոլովներով։

Գրաբարի նախադրությունների մոտ կեսը սեռական հոլովով են խնդիր վերցնում։ «Հենց դա էլ ապացույց է այն բանի, որ այդպիսի նախադրությունների և նրանց խնդրի հարաբերությունը սկզբնապես եղել է հատկացյալի և հատկացուցչի հարաբերություն, որտեղ պահպանվում է նախադրության բառական անկախությունը»[11]։

Դասական գրաբարում սեռական հոլովով խնդիր են ընդունում հետևյալ նախադրությունները և որպես նախադրություն գործածվող բառերը՝ աղագաւ, յաղագս, առանց, առաջի, արտաքոյ, ղէմ, ի ղէմս, յերեսաց, զկնի, զհետ, ընդառաջ, ընդ ղէմ (ընդդէմ), յայնկոյս, յայսկոյս, հանդէպ, ի ձեռն, ի մէջ, ընդ մէջ, ի միջոյ, յանդիման, յանուն, յետ, ի ներքոյ, պատնառաւ, ի պատնեսաս, ի պէտս, վասն, ի վերայ, ի տեղի, փոխանակ, փոխարէն, զօրէն, զօրինակ և այլն։

Մեսրոպյան շրջանի ինքնուրույն մատենագրության մեջ այդ նախադրություններից յուրաքանչյուրը գործածվել է տարբեր իմաստներով[12] և տարբեր հաճախականությամբ։ Ստորև կանդրադառնանք դրանցից յուրաքանչյուրին, նշելով կիրառությունները և բերելով համապատասխան օրինակներ քննարկվող չորս մատենագիրների երկերից։

Աղագաւ. սա միշտ դրվում է խնդրից հետո, արտահայտում է պատճառական կամ նպատակային հարաբերություն՝ «պատճառով» կամ «համար» նշանակությամբ և իր խնդրի հետ դառնում է պատճառի կամ նպատակի պարագա։ Դասական շրջանի ինքնուրույն մատենագրության մեջ հանդիպում ենք եզակի օրինակների. այսպես, օրինակ՝ Կորյունը և Ագաթանգեղոսը ոչ մի անգամ չեն օգտագործել, Եղնիկը օգտագործել է մի անգամ, իսկ Բուզանդը՝ մի քանի անգամ։ Վերջինիս մոտ էլ ավելի շատ հանդիպում ենք զի՞ հարցական դերանվան սեռական հոլովի հետ գործածված, որից էլ առաջացել է էՀ աղագաւ ոճական կիրառությունը։ Օրինակ՝ «Եւ այնր աղագաւ պատուիրէր նմա վասն իւր յաշտ առնել»[13]։ «Բայց ի թագաւորէն Յունաց յայտնի և անարգել անգամ բանիւք չիշխէր, և ոչ սակաւ մի համարձակել ի նա, թող թէ մահու աղագաւ»[14]։ «ԷՀ աղագաւ զայն առնիցէ ընդ մեզ» (Բուզանդ, 208)։ «ԷՀ աղագաւ նա զայս արդեւք գործեաց» (Բուզանդ, 209)։

Նույն աղագ արմատից է ծագում նաև յաղագս նախադրությունը, որն ունի նախադաս գործածություն և ցույց է տալիս.

ա) վերաբերություն՝ «մասին» կամ «վերաբերյալ» իմաստով, իր խնդրի հետ լինում է վերաբերության անուղղակի խնդիր. օրինակ՝ «Այլ իբրև մեռաւ մեծ սպարապետն Մանուէլ, հրամանն գոր տայր յաղագս կոծոյն չդնելոյ՝ այնմ ինչ որ ոչ անսաց» (Բուզանդ, 218).

---

11 Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, էջ 299։

12 Մեր բերականներից շատերը հոլովառու բառերի կամ նախադրությունների մասին խոսելիս նշել են դրանց հիմնական իմաստները։

13 Եղնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826, էջ 129։

14 Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, էջ 181։

բ) պատճառ՝ «պատճառով» նշանակությամբ և իր խնդրի հետ դառնում է պատճառի պարագա, ինչպես «Վասն որոյ Մերովպս ամենեքին կոչին յաղագս բարբառոյն բաժանելոյ» (Եղնիկ, 207)։ «Մի՛ թշուառական աշխարհս Հայոց յաղագս քո կորիցէ» (Բուզանդ, 94).

գ) նպատակ՝ «համար» դմաստով և իր խնդրով հանդես է գալիս իբրև նպատակի պարագա. այսպես՝ «Եւ ինքեանք կային ի մարտի պատերազմին յաղագս շինութեան աշխարհին Հայոց յամենայն կողմանց ընդ թշնամիս և ընդ սահմանակիցս» (Բուզանդ, 209)։

Առանց նախադրությունը միշտ գրվում է իր խնդրից առաջ և ցույց է տալիս բացառման հարաբերություն, արտահայտելով.

ա) խնդրի բացառումը, որևէ հատկանշից զուրկ լինելը. օրինակ՝ «Արեգակն ... առանց օդոյ խառնուածոյ այրիչ և ցամաքեցուցիչ է» (Եղնիկ, 10)։ «Զի մի՛ առանց մեր կատարեսցին» (Բուզանդ, 73).

բ) «հակառակ» գաղափարը. օրինակ՝ «Առանց Աստուծոյ կամաց ի ծառոյն ճաշակիցէ» (Եղնիկ, 49)։ «Այլ զի առանց կամացն Աստուծոյ գործին իրք ինչ՝ լինին չար» (Եղնիկ, 50).

գ) բացառում, ժխտում, այսինքն՝ արտահայտում է ան- ժխտական նախածանցին համապատասխան իմաստ. օրինակ՝ «Առանց նենգութեան նշանակ»[15]։ «Առանց թուոյ և առանց չափոյ» (Բուզանդ, 73)։ Այս օրինակներում նախադրությունը իր խնդրի հետ նշանակում է՝ աննենգ, անթիւ, անչափ։ Նման կիրառությամբ ավելի շատ հանդես է գալիս անորոշ դերբայի հետ, այսպես՝ «Առանց յապաղելոյ զառաջի եղեալն մատենագրել» (Կորիւն, 22), այսինքն՝ անյապաղ։ Կամ՝ «առանց զբաղելոյ» (Կորիւն, 82), այսինքն՝ անզբաղ։ «Առանց յիշելոյ» (Եղնիկ, 177), այսինքն՝ անյիշելի և այլն։

Առաջի. դասական գրաբարում հաճախակի գործածություն ունեցող նախադրություններից է, որը գրվում է խնդրին նախադաս և արտահայտում է.

ա) ընդդիմության հարաբերություն՝ «դեմ», «հակառակ» նշանակությամբ, իր խնդրի հետ լինում է ընդդիմության անուղղակի խնդիր. օրինակ՝ «Զայս և բազում և աւելի քան զսոյնս խօսեցաւ առաջի Արշակայ արքայի և առաջի ամենեցուն» (Բուզանդ, 217).

բ) «առջև», «դիմաց», «առաջ», «ներկայությամբ» իմաստները և իր խնդրի հետ լինում է տեղի պարագա. օրինակ՝ «Բազում անգամ զծառայ այր առաջի նորա դան հարկանեն» (Եղնիկ, 82)։ «Առաջի թագաւորաց... զամենապիրկչին Յիսուսի անուն կրեաց յանձինս» (Կորիւն, 78).

գ) «առջևից» իմաստը և իր խնդրի հետ դառնում է տեղի պարագա. օրինակ՝ «Փախստեայ լինէր առաջի նոցա»[16].

դ) հանգում, այսինքն՝ ցույց է տալիս այն առարկան, որին հանգում է գործողությունը, և իր խնդրով հանդես է գալիս որպես հանգման անուղղակի խնդիր. օրինակ՝ «Եւ ի միւսում աւուրն ածին զնա առաջի նորա» (Ագաթանգեղոս, 66)։ Մատուցեալ Արհմենի առաջի Զրուանայ՝ ասէ ցնա» (Եղնիկ, 115)։

Գործածվում է նաև ետադաս. օրինակ՝ «Որք ոչ մեզ միայն, ո՛վ թագաւոր, այլ յորժամ քո առաջի զմատեանդ ընթեռնուցուն՝ յայտնի է» (Ագաթանգեղոս, 470)։

---

15 Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 30։

16 Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1909, էջ 18։

Երբեմն սրան հավելագրվում է յանդիման նախադրությունը. օրինակ՝ «Ձերբակալ արարեալ ածեալ յանդիման առաջի կայսերն կացուցանէր» (Ագաթանգեղոս, 29)։

Զառաջեաւ. սա իբրև նախադրություն գործածվելիս՝ ցույց է տալիս տեղի և հանգման հարաբերություն, արտահայտելով.

ա) «առջևը», «մոտը», «դիմացը» իմաստները, իր խնդրի հետ լինում է տեղի պարագա. օրինակ՝ «Որք սնան զառաջեաւ թագաւորին Հայոց» (Բուզանդ, 10).

բ) հանգում և իր խնդրով դառնում է հանդման անուղղակի խնդիր. ինչպես «Ապա կոչեն զՄուշեղ զառաջեաւ արքային» (Բուզանդ, 163)։

Զառաջեաւ-ը խնդիր է վերցնում նաև գործիական հոլովով, որին կանդրադառնանք իր տեղում։

Նույն իմաստով և կիրառությամբ շատ հազվադեպ հանդես է գալիս նաև յառաջև բառը. օրինակ՝ «Վասն այնորիկ նա մի՛ հասցէ առ այն՝ որով սպառնացան, այլ խափան լիցի իւր յառաջև նմա բազում մակարդ մեղացն իւրոց գործելոց» (Բուզանդ, 98)։

Արտաքոյ նախադրությունը գործածվում է միշտ նախադաս և նշանակում է.

ա) «դուրս», «դուրսը», «հեռու» և իր խնդրի հետ լինում է տեղի պարագա. օրինակ՝ «Եւ երինջն՝ զոր արտաքոյ բանակին սպանանէին յողջակէզ, ըստ որոց օրինակի և Քրիստոս արտաքոյ քաղաքին չարչարեցաւ» (Եղնիկ, 282)։ «Հանեալ այնուհետև զմարդն... արտաքոյ դրախտին բնակեցուցանէր» (Ագաթանգեղոս, 150).

բ) «հակառակ», «անկախ», «դուրս». այսպիսի գործածությամբ իր խնդրի հետ դառնում է ընդդիմության անուղղակի խնդիր. օրինակ՝ «Արդ անսաստութիւնն ևեթ որ արտաքոյ Աստուծոյ կամացն գործիցի պատճառ չարեաց իմանալի է» (Եղնիկ, 44)։ «Արտաքոյ գրոց սրբոց բարբանջեն» (Եղնիկ, 260)։

Նախադաս կիրառություն ունեն յանդիման, դէմ յանդիման և հանդէպ նախադրությունները, որոնք միմյանց հոմանիշ են և արտահայտում են «դեմը», «դիմացը», «առջևը», «ներկայությամբ» իմաստները։ Իրենց խնդիրներով լինում են տեղի պարագա. օրինակ՝ «Յանդիման դրախտին բնակեցուցանէր» (Ագաթանգեղոս, 150)։ «Կայցէ արեգակն հանդէպ ձորոյն Դաբաւոնի» (Եղնիկ, 189)։ «Որ կայ դէմ յանդիման լերինն մեծի՝ որում Յուլն անուանեալ կարդան» (Բուզանդ, 33)։

Յանդիման-ը շատ հազվադեպ խնդիր է առնում նաև տրական հոլովով. օրինակ՝ «Բայց նախ յանդիման նմա հրամայեր փոդոտել զորդին նորա, ապա յետոյ զնա դլխատել» (Բուզանդ, 206)։ «Եւ յանդիման նմին դկնի նորա Վարդանոյշ խայտառակեալ իցէ» (Բուզանդ, 212)։

Ի դէմս. այս գոյականը իբրև նախադրություն վերոհիշյալ չորս մատենագիրների գործերում շատ հազվադեպ է հանդիպում։ Ունի նախադաս գործածություն և ցույց է տալիս «դեմը», «դիմացը», «առջևը», «ներկայությամբ» դաղափարը։ Նույն նշանակությամբ գործածվող վերոհիշյալ երեք նախադրություններից տարբերվում է նրանով, որ դրվում է անձ ցույց տվող բառերի վրա. իր խնդրի հետ լինում է տեղի կամ ձևի պարագա. օրինակ՝ «Եւ կի յայտ արասցէ, եթէ անտի մարդարէացաւ՝ զնովիմբ ածեալ և ի դէմս

աշակերտացն» (Ագաթանգեղոս, 241)։ «Որպէս ասէն յիրաւի ի դէմս նոցա նոյն երդողին մարգարէութիւն» (Ագաթանգեղոս, 324)։

Նման կիրառությամբ հանդիպում ենք եզակի օրինակների ի դիմաց ձեվով. օրինակ՝ «Ասաց մարգարէն ի դիմաց Տեառն» (Ագաթանգեղոս, 174)։

Յերեսաց. այս գոյականը Ես գործածվում է իբրև նախադրություն, որն արտահայտում է պատճառական հարաբերություն՝ «պատճառով» իմաստով և դառնում է պատճառի պարագա. օրինակ՝ «Յերեսաց քոց ես յո՞ փախեայց» (Ագաթանգեղոս, 147)։ «Եւ երկիր խախտեցաւ յերեսաց նորա» (Ագաթանգեղոս, 239)։

Ցույց է տալիս նաև «կողմից» գաղափարը և իր խնդրի հետ դառնում է ներգործող խնդիր, ինչպես՝ «Եւ արքայն Վարազդատ ի փախուստ դառնայր յերեսաց զօրավարին Մանուէլի» (Բուզանդ, 204)։ «Ապա ի պարտութիւն մատնեցան զօրքն Պարսից յերեսաց նոցա, դարձան ի փախուստ» (Բուզանդ, 125)։ Բայց այս օրինակներում առկա է նաև պատճառի երանգը։

Զկնի և զհետ նախադրությունները ունեն միատեսակ կիրառություն. դրանք ցույց են տալիս.

ա) «ետևից» գաղափարը, իրենց խնդրի հետ լինում են տեղի պարագա. օրինակ՝ «Որ զկնի իմ գայ՝ առաջի իմ եղև» (Ագաթանգեղոս, 208)։ «Հեծեալք իբրեւ զմարդիկ զհետ երէոյ արշաւիցեն» (Եզնիկ, 107).

բ) «հետո» (ժամանակի իմաստով) և իրենց խնդրի հետ լինում են ժամանակի պարագա. օրինակ՝ «Զկնի իսկ եկելոցս մարգարէիւքն ամենեքումբք ծանօթս տայ» (Ագաթանգեղոս, 185)։ «Սա զհետ հօրն իւրոյ Վրթանայ զառաքելական յաջորդէր» (Բուզանդ, 26)։

Հանդիպում է նաև զկնիագոյն ձևով, որը կազմում է համեմատության աստիճան։ Օրինակ՝ «Որ կայր զկնիագոյն եպիսկոպոսին Եւսեբի» (Բուզանդ, 83)։

ՄԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 1. Զկնի և զհետ նախադրությունների զ նախդիրը հաճախ անջատվում է բառից և անցնում խնդրի կամ այլ անդամի վրա. այսպես, օրինակ՝ «Հոմներոս զրաբանեալ, զնորին հետ երթեալ, պաճուճեալ բանիւք զնոյնս համարտակէ» (Եզնիկ, 240)։

2. Երբ դրանք լինում են նտադաս, զ նախդիրը դրվում է նաև խնդրի վրա. օրինակ՝ «Վասն որոյ ածէ զնորին զկնի. թէ յափշտակեցաւ այնպիսին ի դրախտն» (Եզնիկ, 262)։ «Եւ դեսպանս ստէպ ստէպ յորդւոյ նորա ի Պապայ զմիմեանց զկնի ի շաբաթու շաբաթու եկեալ հասանէին» (Բուզանդ, 144—145)։ «Մեք զդրոց սրբոց զհետ երթիցուք» (Եզնիկ, 211)։

Ընդ առաջ. այս մակբայը հաճախ գործածվում է իբրև նախադրություն. որը սովորաբար դրվում է նախադաս և ցույց է տալիս «դեմը», «դիմացը», «առջևը» գաղափարը և իր խնդրով դառնում է տեղի պարագա. օրինակ՝ «Եւ ելանէր ընդ առաջ նոցա սուրբ տիկինն Թակղէս զարդարեալ մեծապայծառ» (Բուզանդ, 86)։

Ունի նաև ետադաս գործածություն. օրինակ՝ «Ելանէին միմեանց ընդ առաջ մեծաւ ուրախութեամբ» (Բուզանդ, 87)։

Շատ սակավ խնդիր է ստանում նաև տրական հոլովով. օրինակ՝ «Ընդ առաջ նմա վերանալ» (Ագաթանգեղոս, 387)։

Ընդ դէմ. սա միշտ դրվում է խնդրից առաջ և արտահայտում է հետևյալ իմաստները.

ա) «դեմը», «դիմաց», «առջևը» և իր խնդրի հետ լինում է հանգման անուղղակի խնդիր. օրինակ՝ «Եւ նա խաղացեալ գայր ի վերայ Հայաստան երկրին ընդ դէմ սոցա» (Բուզանդ, 123)։ Վերոհիշյալ մատենագիրների մոտ այս նախադրությանը ավելի շատ հանդիպում ենք կից գրությամբ. օրինակ՝ «Թագաւորն Յունաց... չու արարեալ գայր հասանէր յերկիրն Հայոց ընդդէմ թագաւորին Պարսից» (Բուզանդ, 47).

բ) «հակառակ» և իր խնդրով դառնում է ընդդիմության անուղղակի խնդիր. օրինակ՝ «Մեք ընդէ՞ր դառնայցեմք ընդդէմ հրամանացն» (Եղնիկ, 162).

գ) «փոխանակ», «համար», օրինակ՝ «Որք իշխեցին ընդդէմ Աստուածորդւոյն խոստանալ» (Ագաթանգեղոս, 289).

դ) Երբեմն կիրառվում է որպես ստորոգելիական վերադիր, այսպես՝ «Ամենեին չերդնուլն՝ սուտ չերդնլոյ ոչ եթէ ընդդէմ ինչ է, այլ յոյժ ընկերակից» (Եզնիկ, 278)։

Գտնում ենք նաև ետադաս գործածված. օրինակ՝ «Եւ նոցա ընդդէմ կայցեն ընդ նորա թագաւորութեանն» (Ագաթանգեղոս, 17)։

Թէկն կամ թեկն գոյականի հոգնակի տարբեր հոլովաձևեր ի և զ նախդիրների հետ միասին գործածվում են իբրև նախադրություն։ Դրանք են՝ ի թիկանց, ի թիկունս, զթիկամբ, որոնք արտահայտում են տեղի հարաբերություն՝ «թիկունքից», «ետևից», «ետևի կողմից» նշանակությամբ և իրենց խնդրի հետ դառնում են տեղի պարագա. օրինակ՝ «Ի պատիւ գլխոյ ի վերայ գագաթանն ի թիկանց արծուոյն՝ հանգոյցք թագի կապեալ աշխարհաւանդ հանգոյց» (Բուզանդ, 207)։ «Ակն ունէր, երթալ կամելով յօժարութեամբ ի թիկունս կայսերն Յունաց» (Բուզանդ, 110)։

Արտահայտում է նաև նպատակային հարաբերություն՝ «օգնելու», «օգնության համար» իմաստով. օրինակ՝ «Նորա... հանդերձ գործակցօք իջեալ ի թիկունս դիպացն պատահելոց» (Կորիւն, 82)։

Կոյս գոյականի եզակի հայցականը այս և այն դերանունների և ի (յ) նախդրի միջոցով կազմում է յայսկոյս, յայնկոյս կցական բարդությունները, որոնք հիմնականում գործածվում են իբրև մակբայներ։ Երբեմն դրանք կիրառվում են որպես նախադրություն, ցույց տալով տարածական հարաբերություն և իրենց խնդրի հետ լինում են տեղի պարագա։

Յայսկոյս նշանակում է «այս կողմը», «այս կողմում», «առաջը». օրինակ՝ «Նա և զհամբարապանսն իսկ և բազումս ի շանց յայսկոյս որմոյն ընկենոյր ի մէջ զօրացն» (Ագաթանգեղոս, 28)։

Իսկ յայնկոյս-ը արտահայտում է «այն կողմը», «այն կողմում», «դիմացը», «մյուս կողմը» իմաստները։ Օրինակ՝ «Եւ կէսքն անկեալ ելին յայնկոյս ջրոյն» (Ագաթանգեղոս, 385)։

Երբեմն նախադրության պաշտոնով են հանդես գալիս նաև ի կողմն, ի կոյս, ի կողմանս ձևերը։

Ձեռն գոյականի դանազան հոլովաձևեր ի և ընդ նախդիրների հետ կազմում են մի քանի նախադրություններ, որոնք են՝ ի ձեռն, ընդ ձեռն, ի ձեռս, ի ձեռանէ, ի ձեռաց։ Դրանք ցույց են տալիս այն առարկան, որի միջոցով

նամ օգնությամբ կատարվում է գործողությունը, և իրենց խնդրով դառնում են միջոցի անուղղակի խնդիր՝ «միջոցով», «օգնությամբ» նշանակությամբ, օրինակ՝ «Զի ոչ միայն ի ձեռն արանց, այլ և ի ձեռն կանանց սրբոց քարոզեցաւ Աւետարանն կենդանութեան ընդ տիեզերս ամենայն» (Ագաթանգեղոս, 354)։ «Եւ գանձս բազումս և անթիւս... ի ձեռս Վարդանայ... առաքէր» (Բուզանդ, 88)։ «Արդ՝ ի վերայ նոցա այր մի ընտիր, ի ձեռանէ Մովսիսի, հրամանաւ Աստուծոյ զօրավար և առաջնորդ կացուցեալ» (Ագաթանգեղոս, 162)։ «Ապա թէ ոչ կամիցիս գնալ, մեռանիս ի ձեռաց իմոց որպէս և Մուշեղն մեռաւ» (Բուզանդ, 203)։

Խնդիրը երբեմն ընկնում է նախադրության բաղադրիչների միջև. օրինակ՝ «Յորոյ ձեռն բղխեսցէ աղբիւր մկրտութեան» (Ագաթանգեղոս, 390)։

Ետադաս գործածության ժամանակ ի նախդիրը դրվում է նաև խնդրի վրա, ինչպես՝ «Քրիստոս է որդի Աստուծոյ, յորոյ ի ձեռն արար նա զաշխարհս» (Ագաթանգեղոս, 35)։ Նման կիրառությամբ ընդհանրապես հանդես է գալիս բարդ նախադասության կազմում, երբ երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապվում է որ հարաբերական դերանվամբ։

Մէջ գոյականի զանազան հոլովաձևեր ի և ընդ նախդիրներով կազմել են ի մէջ, ի միջի, ի միջոյ, ընդ մէջ նախադրությունները, որոնցից երկրորդը ստացական դերանունների մոտ խնդիր է ստանում նաև տրական հոլովով։ Ի մէջ նախադրությունը գրաբարի ամենագործածական նախադրություններից մեկն է։ Հիմնականում արտահայտում է տարածական հարաբերություն և իր խնդրի հետ դառնում է տեղի պարագա։ Նշանակում է.

ա) «մեջ» (ներգոյականի իմաստով), ինչպես՝ «Օգս՝ որ ի մէջ գնդին երկնից՝ փակեալ կայ» (Եզնիկ, 192)։ «Եւ բնակէր ի մէջ առիւծուց» (Բուզանդ, 185).

բ) ուղղություն. այս դեպքում գործածվում է շարժում ցույց տվող բայերի մոտ. օրինակ՝ «Ապա այրն... երթեալ մտանէր ի մէջ ընդանեաց իւրոց» (Բուզանդ, 226).

գ) «միջև». այս դեպքում խնդիրը լինում է բազմակի, իսկ նախադրությունը ցույց է տալիս այդ բազմակի խնդիրների միջև եղած փոխադարձ կապը. օրինակ՝ «Բարիոք է արեգակն... իբրև ճրագ մի ի մեծի տան ի մէջ ձեղուան և յատակի լուցեալ» (Եզնիկ, 14)։

Այս վերջին իմաստը սաստկացնելու նպատակով երբեմն ի մէջ նախադրությունը դրվում է երկու խնդրի վրա էլ. օրինակ՝ «Ապա թէ ոչ տեսանես զու զիս, խնդրես պատերազմ ի մէջ իմ և ի մէջ քո» (Բուզանդ, 139)։ Այսպիսի կիրառության ավելի շատ հանդիպում ենք Բուզանդի մոտ։

Ի միջի նախադրությունը մեծ մասամբ գործածվում է նախադաս և արտահայտում է հետևյալ իմաստները.

ա) «մեջ», «ներսում» (ներգոյականի իմաստով) և իր խնդրի հետ լինում է տեղի պարագա. օրինակ՝ «Բայց զի մի՛ ի միջի մերոյ պատմութեանս ընդհատ երևեսցի հուն մի, նշանակեցաք» (Բուզանդ, 5).

բ) ուղղության. օրինակ՝ «Զի չեն սովոր դժոխք՝ ընդունել ի միջի իւրեանց զկեանս» (Եզնիկ, 247)։

Վերոհիշյալ բաղադրյալ նախադրությունների նման ի միջի-ի բաղադրիչներն էլ երբեմն հեռանում են իրարից, և խնդիրը ընկնում է նրանց միջև.

օրինակ՝ «Կանգնեալ նստաւ ի ժողովոյն միջի» (Կորիւն, 92)։ «Որ ի մարդկան միջի ոչ պաշտի» (Եզնիկ, 252)։

Ի միջոյ նախադրությունը արտահայտում է անջատման հարաբերություն և իր խնդրով դառնում է անջատման անուղղակի խնդիր կամ տեղի պարագա՝ «միջից» իմաստով. օրինակ՝ «Եւ հանեալ զոգիսն ի միջոյ նորա, տարաւ յերրորդ երկինսն առ հայրն իւր» (Եզնիկ, 248)։

Ընդ մէջ-ը ցույց է տալիս.

ա) «միջև» (տարբեր առարկաների միջև) գաղափարը. օրինակ՝ «Յայտ է՝ թէ այլ ինչ էր անջրպետ ընդ մէջ երկոցուն մեծ քան զերկոսին» (Եզնիկ, 23).

բ) «մեջտեղում», «մեջտեղից» իմաստը. օրինակ՝ «Յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ՝ հոգ ի մտի արկանէր սիրելին Քրիստոսի և վասն բարբարոսական կողմանն» (Կորիւն, 62)։

Գրաբարի հաճախակի գործածվող նախադրություններից է նաև յետ-ը, որն ունի նախադաս գործածություն և նշանակում է «հետո» (ժամանակի իմաստով), «անց» և իր խնդրի հետ դառնում ժամանակի պարագա. օրինակ՝ «Յետ հազար ամի յաշտ առնելոյ սկսաւ ածել զմտաւ» (Եզնիկ, 113)։

Ի ներոյ նախադրությունը արտահայտում է տարածական հարաբերություն և իր խնդրի հետ լինում է տեղի պարագա, նշանակում է.

ա) «ներքև». օրինակ՝ «Բարիոք է արեգակն... մեզ և ամենայն արարածոց՝ որ ի ներոյ երկնից՝ յօդուտ և ի դարման» (Եզնիկ, 14).

բ) «տակ». այս կիրառությամբ ավելի շատ է հանդիպում. օրինակ՝ «Քրիստոս... դնէ զամենայն թշնամիս ի ներոյ ոտից իւրոց» (Եզնիկ, 273)։ «Եմուտ ի ներոյ փղին» (Բուզանդ, 117)։

Հազվադեպ հանդիպում է ետադաս գործածությամբ. օրինակ՝ «Իսկ մարդկանս ի ներոյ. ի հողեղէն բնակութեան երկրիս, տուան վիճակք» (Ագաթանգեղոս, 136)։

Պատճառաւ և ի պատճառս գոյականները գործածվում են նաև իբրև նախադրություն, որոնք ցույց են տալիս պատճառական հարաբերություն՝ «պատճառով», «պատրվակով», «համար» նշանակությամբ և իրենց խնդրով դառնում պատճառի պարագա։ Սրանցից առաջինը լինում է ետադաս, իսկ երկրորդը՝ նախադաս. օրինակ՝ «Պարթևն... ելեալ երթայր հատուածի պատճառաւ ի կողմանս Հայոց» (Ագաթանգեղոս, 21)։ «Առնոյր զթագաւորն մեկուսի նա և եղբայր իւր հարագատ՝ իբրև ի պատճառս ինչ զբօսանաց, իբրև խորհուրդ ինչ խորհել ընդ նմա» (Ագաթանգեղոս, 22)։

Պէտք գոյականի հայցական հոլովը ի նախդրի հետ գործածվում է իբրև նախադրություն, որը ցույց է տալիս պատճառի («պատճառով» իմաստով) կամ նպատակի («նպատակով») հարաբերություն. օրինակ՝ «Յորժամ... կամէր ուրեք երթալ ի պէտս ճանապարհի. յանկարծօրէն ձիւնն ցամաք արջն լինէր առաջի նորա» (Բուզանդ, 32)։ «Բայց առաւել կարեւոր է, որ ի պէտս եղբարցն սպասաւորեսցէ» (Եզնիկ, 309)։

Դասական շրջանի (և ոչ միայն այս) մատենագրության մեջ ամենից շատ գործածվում է վասն նախադրությունը։ Այսպես, օրինակ՝ Ագաթանգեղոսի մոտ դրան հանդիպում ենք 422 անգամ, Եզնիկի մոտ՝ 175, Կորյունի մոտ՝ 45։

Նա իր խնդրի հետ արտահայտում է վերաբերության, նպատակային, պատճառական և այլ հարաբերություններ։ Դրսևորում է հետևյալ իմաստները.

ա) «պատճառով» և իր խնդրի հետ լինում է պատճառի պարագա. օրինակ՝ «Գազանք վասն վնասակարութեանն ի չարէ ումեքէ արարչէ կարծիցին» (Եզնիկ, 146)։ «Եւ այս ամենայն իրքս վասն ձիոյն եղեն» (Բուզանդ, 226)։ «Եւ ոչ ոք կարաց ձգել զձեռն իւր վասն որմոյն բարձրութեան» (Ագաթանգեղոս, 27).

բ) «համար», «նպատակով» և իր խնդրով դառնում է նպատակի պարագա. օրինակ՝ «Դաւիթ... վասն ամենայն ազգաց՝ զվիճակ աստուածատուր օրինացն նշանակէր» (Կորիւն, 56)։ «Ցայժմ ես վասն քո յաշտ առնէի, յայսմհետէ դու վասն իմ առնիցես» (Եզնիկ, 115).

գ) «մասին», «վերաբերյալ» և իր խնդրի հետ լինում է վերաբերության անուղղակի խնդիր. այսպիսի կիրառություն ունի ասել, խօսել, պատմել, ճառել, հարցանել, քարոզել, գիտել և նման այլ բայերի հետ. օրինակ՝ «Եւ արդ վասն նորա իսկ սատանայի հարցցուք» (Եզնիկ, 52)։ «Պատմեցաւ նոցա յարքայէ վասն գտելոյն ի Դանիելէ» (Կորիւն, 44)։ «Ոչ ոք գիտէր վասն նորա» (Ագաթանգեղոս, 29).

դ) «փոխարեն», «դիմաց» և իր խնդրի հետ լինում է անուղղակի խնդիր. օրինակ՝ «Որ նմա վասն լաւութեանց շնորհեցաւ» (Եզնիկ, 41)։ «Զիա՞րդ էր՝ զի վասն դոյզն յանցմանն անկանէր ընդ մահուամբ» (Եզնիկ, 73)։ «Են ինչ ցաւք՝ որ վասն մեղաց լինին, և են ինչ ցաւք՝ որ ոչ վասն մեղաց» (Եզնիկ, 80)։ Այս նախադասությունների մեջ վասն-ը ունի նաև պատճառական իմաստ։

Շատ սահմանափակ գործածվում է նաև ետադաս. օրինակ՝ «Փորձելոյ վասն հաստատեալ է զնա աստուծոյ» (Եզնիկ, 182)։ «Օրէնքն յանցուածոց վասն յաւելան» (Ագաթանգեղոս, 176)։

Անորոշ դերբայի մոտ վասն նախադրությունը խնդիր է ընդունում նաև հայցական հոլովով. օրինակ՝ «Ապա արձակէր զիշխանսն պատուականս ի հնազանդութիւն խաղաղութեան վասն գերեդարձ առնել ի կայսերէն միւսանգամ» (Բուզանդ, 49)։ «Գանձս բազումս և անթիւս վասն զմիտս հաճել թագաւորին Արշակայ, ի ձեռս Վարդանայ և որք ընդ նմա էին, առաքէր» (Բուզանդ, 88)։

Կազմել է մի քանի դարձվածքներ, ինչպես՝ վասն որոյ, վասն այնորիկ. վասն այսորիկ, վասն զի, վասն է՞ր։

Գրաբարի հաճախակի գործածվող նախադրություններից է նաև ի վերայ բառը. այսպես, օրինակ՝ Ագաթանգեղոսի մոտ գործածված է 213 անգամ, Եզնիկի մոտ՝ 42։ Արտահայտում է.

ա) տեղ, այն տեղը կամ առարկայի մակերեսը, որտեղ կատարվում է գործողությունը՝ «վրա» իմաստով և իր խնդրի հետ լինում է տեղի պարագա. օրինակ՝ «Որ ի վերայ ոչընչի կայ հաստատեալ» (Եզնիկ, 17)։ «Զի նստէր նա ի գրաստու վերայ և գայր» (Բուզանդ, 226).

բ) «վրայով», «միջով» գաղափարը և իր խնդրի հետ լինում է տեղի պարագա. օրինակ՝ «Շրջէր Հոգի Աստուածութեան ի վերայ ջուրցն» (Ագաթանգեղոս, 206)։ «Եւ ի գետ իբրև հասանէր, կօշկօքն անցանէր ի վերայ ջուրցն գետոցն, և ոչ թանային կօշիկք նորա» (Բուզանդ, 185).

գ) ուղղություն (շարժում ցույց տվող բայերի մոտ). օրինակ՝ «Եւ Հոդին ի վերայ նորա իջեալ ի նմանութիւն աղաւնոյ» (Ագաթանգեղոս, 208)։ «Էջ աղաւնի սպիտակ ի վերայ սեղանոյն» (Բուզանդ, 61).

դ) վերաբերություն՝ «վերաբերյալ», «մասին» նշանակությամբ և իր խնդրով դառնում է վերաբերության անուղղակի խնդիր. օրինակ՝ «Զոր խոսեցայ ի վերայ տանն Իսրայելի և ի վերայ տանն Յուդայ» (Ագաթանգեղոս, 197)։ «Ի վերայ եկացն և պանդխտաց հրաման կայր» (Եղնիկ, 268).

ե) նպատակ՝ «համար» իմաստով և իր խնդրով գործածվում է իբրև նպատակի պարագա. օրինակ՝ «Եւ ի վերայ աստուածապաշտ աշխարհի համարձակութեամբ մեռարուք, զի այն ինքն մահ վասն Աստուծոյ է» (Բուզանդ, 217)։ «Ես եմ, ասէ, հովիւ բաջ, որ ի վերայ խաշանց իմոց մեռանիմ» (Ագաթանգեղոս, 228).

զ) «նկատմամբ», «վրա» (ենթարկման իմաստով) և իր խնդրի հետ դառնում է անուղղակի խնդիր, ինչպես՝ «Տուեալ լիցի քեզ թագաւորութիւնն ինն հազար ամի, և զՈրմիզդ ի վերայ քո արքայ կացուցեալ» (Եղնիկ, 115)։ «Ինքն ըստ հաւատարիմ ծառային թագաւորէ ի վերայ տասն քաղաքաց» (Եղնիկ, 312).

է) «համեմատ», «նկատմամբ» (բաղդատական իմաստով)։ Այսպիսի կիրառությամբ շատ հազվադեպ է հանդիպում. օրինակ՝ «Այլ ոմն հաճոյական արուեստիւ ի վերայ... մահուանն կենօք երեւեալ» (Կորիւն, 24).

ը) «մեջ». այս իմաստով նույնպես շատ սահմանափակ գործածություն ունի. օրինակ՝ «Դա է Որդին իմ միածին, հաճեցուցիչ անձին իմոյ՝ եդից զոգի իմ ի վերայ դորա» (Ագաթանգեղոս, 211).

թ) ժամանակ. օրինակ՝ «Հասանէր թագաւորն ի վերայ իրացն» (Ագաթանգեղոս, 70).

ժ) «վրա», որը հավասարազոր է տրական հոլովի իմաստին. օրինակ՝ «Հեղու զնոսա ի վերայ երեսաց երկրի» (Եղնիկ, 212)։

Երբեմն խնդիրն ընկնում է նախադրության բաղադրիչների միջև, իսկ երբ բաղադրիչները իրարից շատ են հեռանում, նախդիրը դրվում է նաև խնդրին նախընթաց մյուս անդամների վրա. օրինակ՝ «Այլ և՝ վիճեալ ևս պնտին ի բանիցն վերայ» (Եղնիկ, 99)։ «Տեսանոյր զամենեսեան ի նոյն յառաջին բանին վերայ պնդեալ» (Բուզանդ, 59)։

Համազոր անդամների մոտ երբեմն վերայ բաղադրիչը զեղչվում է, և գործածվում է միայն ի նախդիրը. օրինակ՝ «Օրինացն աստուած... զուլ ի մօր կաթն չհրամայէ եփել, և ոչ զհաւ ի ձուոց կամ ի ձագուց վերայ նստեալ՝ ի միասին միանգամայն առնուլ» (Եղնիկ, 277)։ Այսինքն՝ ի վերայ ձուոց կամ ի վերայ ձագուց։

Երբ ի վերայ նախադրությունը դրվում է խնդրից հետո, ի նախդիրը կրկնվում է, այսինքն՝ դրվում է նաև խնդրի կամ նրան նախորդող բառերի վրա. օրինակ՝ «Եւ յաւուրս ձմերայնոյն՝ յորժամ... յայնպիսի լեռանց ի վերայ ընդ այնպիսի ժամանակի կամէր ուրեք երթալ ի պէտս ճանապարհի, յանկարծօրէն ձիւն ցամաք արջն լինէր առաջի նորա» (Բուզանդ, 32)։ Այսինքն՝ ի վերայ այնպիսի լերանց։

Շատ սահմանափակ գործածությամբ խնդրի փոխարեն ստանում է ստացական հոդ. օրինակ՝ «Զի անթաքուստ լիցին ի վրէժխնդրութենէն որ ի վերայն էր հասանելոց» (Ագաթանգեղոս, 281)։ Այսինքն՝ ի վերայ նորա։

Փոխարինության հարաբերություն են ցույց տալիս փոխանակ, փոխարեն և ի տեղի նախադրությունները, որոնք սովորաբար լինում են նախադաս և արտահայտում են «փոխարեն», «տեղը», «դիմաց» (փոխարինության իմաստով) գաղափարը. օրինակ՝ «Արդ՝ փոխանակ բարձրաբերձ և վաղաւեր աշտարակին՝ խաչն ճշմարտութեան կանգնեցաւ» (Ագաթանգեղոս, 295)։ «Զի՞նչ ինչ արդեօք կարիցեմք առնել դարձուածս փոխարէն բարեացն որ ի քէն» (Ագաթանգեղոս, 57)։ «Եւ հրաման ետուն մեծ եպիսկոպոսապետն Վրթանէս հանդերձ թագաւորաւն Արշակայ և Անդովկայ սնուցանել զպատանեակն զԱրտաւազդ, զի կացցէ ի տեղի նախնեացն իւրոց և հօր իւրոյ» (Բուզանդ, 25)։

Սրանցից յուրաքանչյուրը դրսևորում է իրեն հատուկ յուրահատկություններ։ Փոխանակ նախադրությունը բացի վերոհիշյալ կիրառությունից, գործածվում է նաև այլ իմաստներով, այսպես՝

ա) «համար» իմաստով և իր խնդրի հետ դառնում է նպատակի պարագա. օրինակ՝ «Տացուք զանձինս մեր փոխանակ պատուիրանաց քոց» (Ագաթանգեղոս, 57)։ «Եւ փոխանակեցին զանձինս իւրեանց փոխանակ աշխարհին Հայոց մեծաց յամենայն ի մարտ ճակատուցն պատերազմաց» (Բուզանդ, 16).

բ) «պատճառով» իմաստով. օրինակ՝ «Փոխանակ սիրոյ իմոյ մատնէին զիս, այլ ես յաղօթս կայի» (Ագաթանգեղոս, 230)։

Եզակի օրինակների ենք հանդիպում, որտեղ ի տեղի-ի փոխարեն գործածվում է տեղի բառը. օրինակ՝ «Բայց լուաւ եպիսկոպոսապետն Կեսարու՝ թէ սպանին զմեծ հայրապետն Ներսէս, և փոխանակ նորա տեղի նորուն զոր կացուցին զՅուսիկ՝ առանց նորա հրամանի եղեալ» (Բուզանդ, 190)։

Գործածվում է նաև ի տեղ ձևով. օրինակ՝ «Տգէտ և անընտրող առաջնորդ... ի սիրոյ տեղ՝ ատելութիւն ցուցանէ» (Եզնիկ, 311)։

Փոխանակ և փոխարէն նախադրություններին զուգահեռ գործածվում է ընդ նախդիրը, որը իմաստի փոփոխություն չի առաջացնում. օրինակ՝ «Մահու պատիժ փոխանակ ընդ վատութեանն կրեն» (Եզնիկ, 57)։ «Սոքա փոխարէն ընդ հողեղէն յարկացն զոր սոցայն շինեցէք աստ՝ պատրաստեսցեն ձեզ յարկս լուսեղէնս յարքայութեանն երկնից» (Ագաթանգեղոս, 376)։

Գտնում ենք նաև շրջուն շարադասությամբ գործածված. օրինակ՝ «Զանձինս փոխանակ տալով ընդ ճշմարտութեանն տեառն, մատուցին ի վերայ եկեղեցեաց» (Բուզանդ, 24)։ Ճիշտ շարադասությամբ կլիներ՝ Զանձինս տալով փոխանակ ընդ ճշմարտութեանն տեառն։ «Զոր և ընդ նոցայն փոխանակ պատմեալ մարգարէին» (Ագաթանգեղոս, 251)։ Այսինքն՝ Զոր և պատմեալ մարգարէին փոխանակ ընդ նոցայն։

Օրէն գոյականի եզակի (շատ սակավ՝ նաև հոգնակի) որոշյալ հայցականը գործածվում է իբրև նախադրություն, արտահայտելով նմանության, բաղդատության հարաբերություն՝ «պես», «նման» նշանակությամբ, ինչպես՝ «Եւ զօրէն հոգեմատեան դիւանին զլեառն արարեալ՝ ուսուցանէր զորդիսն Իսրայելի» (Ագաթանգեղոս, 160)։ «Զօրէն գազանաց ի լերինս շրջէին» (Բու-

զանգ, 230)։ «Զօրկնս երամոյ թռչնոց բնակեալ էին սորա ի ծագս վիմաց» (Բուզանդ, 230)։

Նման կիրառությամբ գործածվում են նաև օրինակ *և* զօրինակ *գոյականները. օրինակ՝ «Առաջին հարքն որ եղեն* օրինակ *նորա, յորս Աստուծոյ կերպարանքն նկարեալ կային» (Ագաթանգեղոս, 215)։ «Իսկ թզենին բարձեալ ունէր* զօրինակ *անպտուղ մարդկան» (Ագաթանգեղոս, 338)։*

ПРЕДЛОЖНЫЕ СЛОВА, ТРЕБУЮЩИЕ РОДИТЕЛЬНОГО ПАДЕЖА, В ОРИГИНАЛЬНОЙ ЛИТЕРАТУРЕ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА

Ж. Б. ТОСУНЯН

(Резюме)

Предлоги и предложные слова как служебные сочетаются со склоняемыми частями речи. Имея сходные черты, эти слова одновременно отличаются друг от друга: если предлоги являются чисто служебными словами, то предложные слова часто выступают в качестве семантически полнозначных слов. Большинство предложных слов требует родительного падежа.

В статье рассмотрено употребление предложных слов с родительным падежом в различных значениях в древнеармянских памятниках V в.— трудах Езника Кохбаци, Корюна, Фавста Бузанда и Агафангелоса.